

ՀՏԴ 329

ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԴԻՎԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱՆԵ ԱԹԻԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում դիտարկված է հանրային քաղաքականության ինստիտուցիոնալ արդիականացման հրամայականները: Հիմնվելով այն թեզի վրա, որ հանրային քաղաքականությունն արժեքային բազմաչափ երևույթ է և ենթադրում է ավանդական և արդիական արժեքների ներդաշնակում, հեղինակը դիտարկել է «լավ կառավարման» սկզբունքների մեխանիկական ներդրումը հանրային քաղաքականություն: Այդ համատեքստում, ներկայացված է «ոչ լավ կառավարում» շրջանառվող հասկացությունը: Հեղինակն անհրաժեշտ է համարում ՀՀ-ում «թավշյա հեղափոխություն»-ից հետո ընդարձակել հանրային քաղաքականության ինստիտուցիոնալ հիմքերը՝ պետություն-կուսակցություններ-հասարակություն արդյունավետ խոսույթ (դիսկուրս) վարելու նկատառումներով:

Բանալի բառեր. հանրային քաղաքականություն, «թավշյա հեղափոխություն», արդիականացում, ժողովրդավարական անցում, կուսակցություն, «լավ կառավարում», «ոչ լավ կառավարում»:

«Թավշյա հեղափոխություն»-ից հետո, Հայաստանի Հանրապետությունում հանրային քաղաքականության մշակման և իրականացման հանդեպ հետաքրքրությունը մեծացել է: Ակնհայտ է, որ հանրային քաղաքականության ուսումնասիրությունը ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող ՀՀ-ում դարձել է հրամայական: «Առաջին սերնդի» ժողովրդավարների կատարած գծային ազատական բարեփոխումների արդյունքում քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության, օրինականության) հաղթահարման համար անհրաժեշտ է վերլուծել հանրային քաղաքականության արժեքաբանությունը [1, էջ 101-102]: Ավելին, կառավարման խորհրդարանական համակարգի անցումից հետո կարևոր է հստակեցնել կուսակցությունների և կուսակցական լիդերների պատասխանատվության մակարդակը՝ հանրային քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

Մասնագիտական գրականության մեջ առկա են «հանրային քաղաքականություն» հասկացության մի շարք մեկնաբանություններ: Վերջինիս

բազմակողմանի բացատրության համար ակադեմիական և փորձագիտական գրականության մեջ օգտագործվում և նույնակերպ թարգմանվում են «politics» և «policy» հասկացությունները, որոնք իմաստային առումով տարբեր նշանակություններ ունեն: Եթե առաջինը ենթադրում է անհատների, խմբերի, գործարարության, կառավարության և այլ միավորումների կողմից «գործողությունների պլան», «պայքար իշխանության համար», ապա երկրորդը՝ պետական կառավարման մարմինների իրավական փաստաթղթերում ամրագրված, օրինական, համապատասխան ընթացակարգերով ընդունված և պաշտոնապես ձևակերպված որոշումներ են [2, ր. 9-11]: Հետևաբար, «հանրային քաղաքականությունը» հանրային շահերի ներդաշնակեցում է, այլ ոչ թե պայքար իշխանության համար, հենց սրանով է այն տարբերվում կուսակցական քաղաքականությունից: Այն ենթադրում է կառավարության ներկայացուցիչների, ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների անդամների, փորձագետների, անկախ հետազոտողների արդյունավետ համագործակցություն [3, ր. 5-11]: Ավելին, այդ համագործակցությունն ուղղված պետք է լինի սոցիալական այն խնդիրների լուծմանը, որոնք ապահովում են **ժողովրդավարության որակ, սոցիալական խոսույթ, հանրային անվտանգություն և ռազմավարական ապագա:**

Սկսած 1970-ականներից, նկատի ունենալով Հռոմեական ակումբի կողմից կարևորված էկոլոգիական հիմնախնդիրները, «կանաչների շարժումը», ինչպես նաև նոր հանրային քաղաքականության (new public policy) սկզբունքները «հանրային քաղաքականություն» հայեցակարգը տարբեր դիտանկյուններից սկսեցին ուսումնասիրել՝ որպես ժողովրդավարության որակի ինստիտուցիոնալ հիմնավորման գործոն: Եթե ԱՄՆ-ում հետազոտողները շեշտադրեցին պետական կառավարումը և դրա արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, ապա եվրոպացիները կարևորեցին ինտեգրման գործընթացները: Հանրային քաղաքականության եվրոպական դպրոցի ներկայացուցիչ Դ. Կապանոն և նրա թիմն ընդունելով քաղաքական հետազոտությունների ամերիկյան ավանդույթները՝ շեշտադրեցին «politics» և «policy» հասկացությունների ամերիկյան տարանջատման պայմանականությունը, քանի որ քաղաքական որոշման ընդունմամբ քաղաքական պայքարը չի դադարում, այլ վերափոխվում է և ստանում ընդունված որոշման իրականացումը վերահսկելու և մշտադիտարկում իրականացնելու գործառույթ: Դ. Կապանոն սահմանում է պետական քաղաքականությունը՝ որպես «կոլեկտիվ խնդիրները լուծելու միջոց»՝ հետազոտողների ուշադրությունը կենտրոնացնելով իշխանությունից դեպի սոցիալական նշանակություն ունեցող հանրային խնդիրների լուծման վրա [4, ր. 1-12]:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ հանրային քաղաքականությունը չորս տարրերի համադրություն է. **ա) սկզբունքներ**՝ հանրային գործերը կառավարելու ընդհանուր պատկերացում, **բ) նպատակներ**՝ որոշակի խնդրի հետ կապված հատուկ առաջնահերթություններ, **գ) հատուկ միջոցներ**՝ որոշումներ, գործիքակազմ, **դ) ընթացիկ գործողություններ**՝ պաշտոնյաների վարքագիծ, որոնք կոչված են իրականացնել ընդունված որոշումները [5, p. 213]:

Հանրային քաղաքականության վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա տարաբնույթ սահմանումներից, մեզ համար աշխատանքային տարբերակ է ամերիկացի Դ. Անդերսոնի մոտեցումը, «Հանրային քաղաքականությունը վարում են պետական պաշտոնյաները և իշխանությունները՝ ազդելով զգալի թվով մարդկանց վրա», այսինքն՝ պետական մարմինների գերակա գործառույթ է պետական քաղաքականություն մշակելու, ընդունելու և իրականացնելու գործընթացը [6, c. 11-34]:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ հանրային քաղաքականությունը քաղաքական համակարգի բոլոր ինստիտուտների կանոնակարգված աշխատանքի պետական վերահսկման յուրահատուկ ձև և միջոց է, որի նպատակը կառավարության խնդիրների, գործողությունների, ռազմավարական ծրագրերի իրականացումն է՝ ուղղված հանրային շահերի պաշտպանությանը:

Այս մոտեցման շրջանակներում պետական քաղաքականության հիմնական առանցքն է՝ սոցիալական սպասելիքների և սոցիալական պատասխանատվության վրա հիմնված հանրային քաղաքականությունը: Ասվածը հիմնավորենք ներկայացնելով սոցիալական փիլիսոփա Յ. Հաբերմասի կարծիքն առ այն, որ սոցիալական կյանքը որպես հանրային ոլորտ «...կարելի է քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որտեղ կարծիքների տարբերությունները կարող են կարգավորվել բանական փաստարկներով, այլ ոչ թե դոգմաների և սովորույթների հիման վրա» [7, p. 631]: Յ. Հաբերմասը հանրային քաղաքականությունը մեկնաբանում է ինչպես նեղ, այնպես էլ լայն իմաստով: Նեղ իմաստով դիտարկում է հանրային տարածքը՝ որպես սոցիալական կյանքի ոլորտ, որում ձևավորվում է հասարակական կարծիքը: Լայն իմաստով, հանրային քաղաքականությունն ընկալվում է որպես «պետական - մասնավոր», «ընդհանուր - մասնավոր» տարածությունների համագործակցություն՝ ուղղված կյանքի որակի բարձրացմանը: Հետևաբար, արդի պետությունը համագործակցության և բանակցություններ վարելու իր կարողունակությամբ պետք է ձևավորի հասարակական կարծիքի լեգիտիմացման գործընթաց: Ավելին, հասարակական կարծիքը որպես ժողովրդավարացման աղբյուր՝ հանրային շահերի արտիկուլյացիայի և մասնակցության միջոցով հետամուտ է լինում հանրային քաղաքականության իրականացման:

Այս սոցիալական միջավայրում էլ կառավարող վերնախավը և խորհրդարանում առկա ընդդիմությունը օգտագործելով ինստիտուցիոնալ տարածությունը հանդես է գալիս որպես ժողովրդավարական արժեքների կիրառման պատասխանատու: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու նկատառումներով, ծավալվում է հանրային խոսույթ՝ իրականացնելով քաղաքականություն՝ ուղղված ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական հասարակության զարգացմանը: Այս համատեքստում որոշիչ է հանրային ոլորտի առանձնահատկությունը՝ որպես սոցիալական ինտեգրման միջավայր, սոցիալական համերաշխության ձև և գործողությունների հնարավոր սոցիալական միջոցառումների քննարկման տիրույթ: Միաժամանակ, հանրային ոլորտն անհրաժեշտ է ներկայացնել նաև որպես ռացիոնալ քննարկման տարածք՝ հիմնվելով կուսակցությունների թափանցիկ գործունեության վրա: Հանրային ոլորտը վերլուծելու խոչընդոտներից մեկը հանրային և մասնավոր ոլորտների իրավասությունների տարբերակումն է: Այս երկվությունը (դիֆստոմիան) հասկանալու մի քանի եղանակ կա.

1) «Հանրային» ասելով հասկանում ենք այն գործողությունները կամ լիազորությունները, որոնք ինչ-որ կերպ կապված են պետության և հասարակության հետ, իսկ «մասնավորը» վերաբերվում է առանձին անհատների գործունեությանը:

2) «Հանրայինը» առանձնանում է որպես «բաց» և «հանրության համար մատչելի», այսինքն՝ տեղեկատվություն, որը կարող է ստանալ մարդկանց մեծամասնությունը, իսկ «մասնավորը», գաղտնի է պահվում հասարակությունից և հասանելի է սահմանափակ թվով մարդկանց: Ինչ վերաբերում է քաղաքականությանը որպես հանրային երևույթի, ապա այն բարձրացնում է մի կողմից՝ պետական իշխանության, իսկ մյուս կողմից՝ քաղաքացիների անձնական կյանքի «հրապարակայնության» խնդիրը [8, p. 36]:

Հաբերմասյան հանրային քաղաքականության հիմքում ընկած է **արդարությունը և ճշմարտությունը**: Հաբերմասը արդարության սկզբունքը բնութագրում է որպես «universal (U) (համընդհանուր)» խոսույթի էթիկա, իսկ ճշմարտության մասին գրում է. «Փաստարկն ապահովում է բոլոր կողմերի ազատ և հավասար մասնակցությունը ճշմարտության համատեղ որոնմանը, որտեղ բացի փաստարկի ուժից ոչ մեկին ոչինչ չի պարտադրվում»: «Լավագույն փաստարկի ուժը» նրա աշխատանքի հիմնական նախապայմանն է: Արդարությունն ու ճշմարտությունն անխուսափելի են, եթե պահպանվում են խոսույթի էթիկայի հինգ պահանջները.

• **համընդհանրության պահանջ** - քննարկման մասնակիցներից ոչ ոք չպետք է դուրս մղվի խոսույթից,

- **ինքնավարության պահանջ** - խոսույթի գործընթացում յուրաքանչյուր ոք պետք է ունենա հավասար հնարավորություն ներկայացնելու և քննադատելու արդարության պահանջները,

- **վստահված դերը հավուր պատշաճի կատարելու պահանջ** - մասնակիցները պետք է կարողանան համակերպվել այլ մարդկանց արդարության պատկերացումներին,

- **ուժի չեզոքության պահանջ** - մասնակիցների միջև առկա ուժային տարբերությունները պետք է չեզոքացվեն, որպեսզի տարաձայնությունները չազդեն համաձայնության ձեռքբերման վրա,

- **թափանցիկության պահանջ** - մասնակիցները պետք է բացահայտ արտահայտեն իրենց նպատակները, մտադրությունները և զերծ մնան ռազմավարական գործողություններից [9, p. 122]:

Նշված սկզբունքներից ակնհայտ է, որ պետությունը գերակա դեր ունի հանրային քաղաքականության իրականացման գործընթացում: Սակայն, հանրային քաղաքականությունը քաղաքական հարաբերությունների այն ոլորտն է, որի մեջ քաղաքական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությունը համագործակցում են հարաբերական անկախության և թափանցիկության պայմաններում:

Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների պայմաններում աճել է հանրային քաղաքականության իրականացման դերակատարների պատասխանատվության մակարդակը: Արդյունքում, հանրային քաղաքականության տարբեր դերակատարներ են ծագում իրենց շահերով, հասարակական-քաղաքական կողմնորոշումների և արտահայտման ձևերի մեջ: Վերոշարադրյալը մեզ հնարավորություն է տալիս փաստել արդի հայ հասարակությունում տեղի ունեցող համակարգային փոփոխությունների շնորհիվ անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել հանրային քաղաքականության իրականացման մեթոդները: Առանձնահատուկ նշանակություն ունի սոցիալական հետադարձ կապի կառուցակարգերը, որը թույլ է տալիս ուժային և կառավարչական կառույցներին ըստ այդմ արձագանքել և գնահատել սոցիալ-քաղաքական գործընթացների զարգացման միտումները և փոփոխություններ կատարել կառավարչական որոշումների ընդունման գործընթացում: Այս համատեքստում, հանրային քաղաքականությունը իր մրցունակությամբ ապահովում է պետության հիմնական գործառույթների արդյունավետ իրականացումը՝ քաղաքացիական հասարակության կառույցների հետ մշտական հետադարձ կապի ներդաշնակ իրականացմամբ: Նմանօրինակ քաղաքականության իրականացման համար արդյունավետ է կիրառել Գ. Ալմոնդի և Ս. Վեբերի

կողմից մշակված «մասնակցային քաղաքական մշակույթ» հայեցակարգը: Կարևորելով քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցության աստիճանը, «այն նաև ներառում է քաղաքացիների աջակցությունը որոշակի քաղաքական կուսակցությանը կամ թեկնածուին, տեղական պաշտոնյաների հետ համագործակցությունը, իշխանություններին ուղղված գրավոր դիմումների ընթացքի մասնակցությունը, բողոքի ակցիաները և ցույցերը» [10, c. 122–134]:

Քաղաքական մասնակցության էության այս մեկնաբանությունը զուգակցելով ներկայում ՀՀ-ում ընթացող քաղաքական գործընթացների առանձնահատկություններին, կարող ենք փաստել, որ հանրային քաղաքականությանը քաղաքացիների ներգրավվածության էական դրսևորումներից մեկը քաղաքական կուսակցությունների և հասարակական միավորումների գործունեության մասնակցությունն է: Այս համատեքստում, ՀՀ հանրային քաղաքականության ինստիտուցիոնալ արդիականացման հրամայականն է քաղաքական կուսակցությունների և կուսակցական լիդերի դերի կարևորումը: Կուսակցական համակարգը, լինելով հասարակության քաղաքական համակարգի առանցքային գործոն, գերակա ազդեցություն ունի հասարակության ամբողջ քաղաքական կյանքի վրա, չնայած նրան, որ յուրաքանչյուր կուսակցություն գործում է իր ծրագրերի և կանոնադրության շրջանակներում և յուրաքանչյուրը պայքարում է իշխանության ձեռքբերման համար: ՀՀ կուսակցական համակարգի գործունեության արդիականացման կարևորագույն գործընթացը հանրային քաղաքականության արդյունավետության բարձրացումն է: Հետևաբար, հանրային քաղաքականությունը պարտավոր է իր արդյունքի կառավարման կառուցակարգերով տարբեր մակարդակներում հասարակության համար առանձնահատուկ նշանակություն ունեցող հիմնախնդիրների շուրջ համաձայնություն ապահովել [11, c. 136–163]: Հանրային քաղաքականության արդիականացումը պատմականորեն ձևավորված ինստիտուտների (շահային ու ճնշման խմբերի, կառույցների ու միությունների) և հանրային համակեցություն ապահովող, բարդ ու բազմաշերտ գործընթաց է: Սոցիալ-քաղաքական համակարգերի փոխակերպումներով ու ինքնակարգավորմամբ պայմանավորված՝ այն իր բարդ կառուցվածքով հիմնված է քաղաքացիական համաձայնության, սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության սկզբունքների վրա՝ ապահովելով ժողովրդավարության որակի և արդյունքի կառավարման ինստիտուցիոնալացում: Որպես հանրային իշխանությունների կողմից ընտրված գործողությունների կամ հակագործողությունների ամբողջություն՝ հանրային քաղաքականության իրականացումը կապված է ինստիտուցիոնալ

կառույցների էվոլյուցիայի, ավանդական սոցիալական հաստատությունների արդիականացման, նոր հանրային քաղաքականության իրականացման և բնականոն արդիականացման հետ: Որպեսզի կանխվեն շիթային զարգացումները և հասարակության հեղափոխականացումը մշակված նոր հանրային քաղաքականությունը ենթադրում է. «որոշակի շահեր, նպատակներ և արդյունավետ համագործակցություն այդ նպատակներին հասնելու համար» [12, p. 6-14]:

Հանրային քաղաքականության արդյունավետ գործառնումը ենթադրում է սոցիալ-քաղաքական ինստիտուտների բարեշրջում, ինչը գործող ինստիտուցիոնալ կարգի բնականոն արդիականացման և ինստիտուցիոնալիզացման նոր հրամայականների գործընթաց է: Ինստիտուցիոնալիզացման նմանօրինակ մոտեցման հետևանքով նվազեցին հանրային գործունեության շիթային ձևերը և շարժումները՝ պայմանավորված կուսակցության ինստիտուտի գործառնման տիրույթ հանրային քաղաքականության նորմավորված ընդգրկմամբ: Այդ առումով ուշագրավ է XX դարի 50-60-ական թվականներին, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի նորանկախացած երկրների հանրային քաղաքականության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները, որտեղ առավել քան որոշակիացվեց կուսակցական լիդերների տեղն ու դերը [13, p. 15-21]:

Անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացն ունի շարժման տարբեր հետագծեր: Բավական է համեմատել, օրինակ, տեղի ունեցող արմատական փոփոխությունները հանրային և պետական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության կայացման, ժողովրդավարական համախմբման սկզբունքների և, ընդհանրապես, «լավ կառավարման» հաստատման ուղղությամբ կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Միջին Ասիայում, Հարավային Կովկասում (մասնավորապես, Հայաստանում), ինչպես նաև Ռուսաստանում [14, էջ 126]:

Արդեն 1995-96 թվականներին հանրագումարելով կենտրոնական Աֆրիկայի երկրների քաղաքական արդիականացման փորձը և կուսակցական լիդերների գործունեությունը՝ Համաշխարհային բանկը ի լրումն նոր հանրային կառավարման (new public policy) մշակեց «լավ կառավարման» 9 սկզբունքները՝ **մասնակցություն (participation), իրավունքի գերակայություն (rule of law), թափանցիկություն (transparency), արձագանքողականություն (responsiveness), կողմնորոշվածություն դեպի համաձայնություն (consensus orientation), հավասարություն և ներգրավվածություն (equity and inclusiveness), արդյունավետություն և օպերատիվություն (effectiveness and efficiency), հաշվետվողականություն (accountability), ռազմավարական տեսլական (strategic Vision)** [15, p. 1-22]: Նշված սկզբունքների շրջանակներում էլ, նորանկախացած երկրների կուսակցական լիդերները նորովի սկսեցին դիտարկել

հանրային քաղաքականության արդիականացման հրամայականները: Այդ նկատառումներով էլ 2019թ. «լավ կառավարման» սկզբունքներում ավելացրեցին ևս երեքը՝ **էթիկական վարքագիծ (Ethical conduct), նորարարություն և բաց փոփոխություններ (Innovation and Openness to Change, ֆինանսական կառավարում (Sound Financial Management)** [1, էջ 306-307]: Վերջինիս հաջողության գրավականը կառավարող ընտրանու բաց հավաքագրումն է, ազգային, պետական և հանրային շահերի, ինչպես նաև համագործակցության մշակույթի զարգացումը:

Չնայած ՄԱԿ-ի և Համաշխարհային բանկի կողմից պետությունների սոցիալ-քաղաքական զարգացման գործում «լավ կառավարման» հատկացված կարևորությանը՝ այնուամենայնիվ գոյություն ունեն պետություններ, որոնք ոչ միայն չեն որդեգրում «լավ կառավարման» ձևաչափի իրականացումը, ավելին՝ քննադատում են նրա արդյունավետությունը: «Լավ կառավարման» հայեցակարգի քննադատները նշում են, կառավարումը վերաբերում է որոշումների կայացմանը, առաջնահերթություններին և կառավարության գործելաոճին [16, p. 5-9]: Ըստ Մերիլի Գրինդլի և Բրայան Լևիի՝ «Պետական կառավարումը, օրենքի գերակայությունը և քաղաքացիների առջև հաշվետվողականությունը դարձել է անարդյունավետ» [17, p. 10]:

Այնուամենայնիվ, երբ մենք մանրազնին ուսումնասիրում ենք կառավարման բարելավման հետ կապված դժվարությունները, նկատում ենք, որ կառավարումը բնականոն զարգացման հիմնական մարտահրավերն է: «Լավ կառավարման» օրակարգի թերահավատները տարբեր բնույթի հարցեր են բարձրացնում: Օրինակ՝ «Արդյո՞ք անհրաժեշտ է լավ կառավարում»: Իրականում, մի շարք երկրներ բավականին արագ զարգացել են՝ չնայած իրենց կառավարման առանձնահատկություններին կամ պաշտոնական ինստիտուտների բացակայությանը: Կոռուպցիան կարծես թե չի դանդաղեցրել Բանգլադեշի զարգացումը, և ոչ էլ նիդիբերալիստական սկզբունքների բացակայությունը չի կանգնեցրել Չինաստանի տնտեսական աճը:

«Լավ կառավարման» փոխարեն, Մ. Գրինդլն առաջարկել է «բավականաչափ լավ կառավարում»՝ կառավարության գործունեության և քաղաքացիական ներգրավվածության նվազագույն աստիճան՝ որպես զարգացման համար բավարար պայման [18, p. 525-526]: Չնայած շատ գործոններ նպաստավոր են կամ կապված են զարգացման հետ, մի քանիսը պետք է դիտարկվեն որպես զարգացման նախադրյալներ, ասում է Մ. Գրինդլը: «Բավականին լավ» մոտեցմամբ՝ կառավարությունները ձգտում են խթանել զարգացումը [19, p. 553-574]:

Այդ համատեքստում ուշագրավ է Դ. Աջեմօղլու մոտեցումը, որ «ինստիտուտները և օրենքի գերակայությունը հսկայական նշանակություն ունեն տնտեսական զարգացման համար» [20, 1369-1401]: Չնայած ինստիտուցիոնալ վատ որակին՝ զարգացման աճի դեպքեր լինում են անկայուն, կառավարությունն էլ կարող է զարգացման լուրջ շրջադարձեր առաջացնել, ինչպես Ջիմբաբվեն և Վենեսուելան:

«Լավ կառավարման» քննադատներից ոմանք այն կարծիքին են, որ զարգացող երկրները չեն կարող ապահովել պահանջվող չափանիշներին՝ չունենալով անհրաժեշտ պաշարներ, ինստիտուցիոնալ կարողություն, քաղաքական աջակցություն և կամք: Ըստ այս մոտեցման՝ երկրները պետք է բարեփոխումներ իրականացնելու համար բարենպաստ պայմաններ ստեղծեն: Համաձայն Սթիվեն Կրասների՝ «արաբական գարնան» շրջանակներում Գազայում և Եգիպտոսում տեղի ունեցած ժողովրդավարական գործընթացներն ապակայունացրեցին երկրները [21, p. 4-11]: Մեր կարծիքով, նման դեպքերը կարելի է բացատրել արագ անցման հետ: Ասվածը հիմնավորենք Մ. Գրինդլի հետևյալ եզրակացմամբ. «Լավ կառավարման օրակարգին նվիրվածությունը նշանակում է պաշարներ, որոնք ուղղված են այդ դժվար նպատակին հասնելու համար, սակայն արդյո՞ք այդ պաշարներն ավելի լավ կարող են կենտրոնանալ զարգացման այլ ոլորտների վրա» [22, p. 29-31]: Այլ կերպ ասած, չափազանց շատ պահանջներ են ներկայացվում «առաջին սերնդի» ժողովրդավար կառավարություններին:

Մեր կարծիքով, նմանօրինակ մոտեցումն էլ հնարավորություն է տալիս հանրային քաղաքականության ինստիտուցիոնալ արդիականացումը դիտարկել որպես ՀՀ-ի քաղաքական համակարգի փոփոխությունների կառավարման գործընթաց: Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ այս գործընթացի համար հատկանշական պետք է լինի կուսակցական լիդերների, օրենսդիր մարմնի, շահային խմբերի և այլ քաղաքական խմբերի կողմից հանրային քաղաքականություն մշակելու և իրականացնելու պատասխանատվությունը: Համոզված ենք, որ դա ինստիտուցիոնալ առումով հնարավորություն կստեղծի իշխանություններին հաշվի առնել հասարակական կարծիքը, իսկ բնակչությանը կշահագրգռի ցուցաբերել քաղաքացիական նախաձեռնություն և ազդել վարչաքաղաքական որոշումների կայացման գործընթացների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Մարգարյան Մ. Մ.**, Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, 2019թ.:
2. **Donald C. Baumer, Carl E. Van Horn**, Politics and Public Policy, Strategic Actors and Policy Domains, CQ Press; 4th Edition, 2013.
3. **Michael E. Kraft, Scott R. Furlong**, Public Policy: Politics, Analysis, and Alternatives, CQ Press; Sixth edition, United States of America, 2017.
4. **Capano G.**, Introduction: Multidimensional World of Policy Dynamics / G. Capano, M. Howlett // European and North American Experiences in Policy Change. Policy Drivers and Policy Dynamics. – London, 2009.
5. **Page E.**, The Origins of Policy // Moran M., Rein M., Goodin R. Oxford Handbook of Public Policy. Oxford, 2006.
6. **Андерсон Д.**, Публичная политика: введение / Д. Андерсон // Публичная политика: от теории к практике / Н. Ю. Данилов, О. Ю. Гурова, Н. Г. Жидкова. – Спб., 2008.
7. **Habermas J.**, Between Facts and Norms / J. Habermas. – Cambridge, 1996.
8. **Bobbio N.**, Democracy and Dictatorship: The Nature and Limits of State Power. Minneapolis, 1989.
9. **Habermas J.**, Moral Consciousness and Communicative Action. Cambridge, Mass, 1990.
10. **Алмонд, Г.**, Гражданская культура и стабильность демократии / Г. Алмонд, С. Верба // Политические исследования. – 1992. – № 4.
11. **Узланер Д. А.**, Диалог науки и религии: взгляд с позиций современных теорий демократии // Государство, религия, церковь в России и за рубежом. – 2015. – №1 (33).
12. **Dr. S. B. M. Marume**, Public Policy and Factors Influencing Public Policy, International Journal of Engineering Science Invention ISSN, Volume 5 Issue 6, June 2016.
13. **Frank Fischer, Gerald J. Miller, Mara S. Sidney**, Handbook of public policy analysis: theory, politics, and methods. Boca Raton (Fla.) : CRC press, 2007.

14. **Մարգարյան Մ. Մ.**, ժողովրդավարացման երրորդ փուլը. Անցումային հասարակությունների գծային զարգացման բնույթը, Երևան, 2005թ., Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2:
15. **Carlos Santiso**, Good Governance and Aid Effectiveness: The World Bank and Conditionality, The Georgetown Public Policy Review Volume 7 Number 1 Fall 2001
16. **Jomo Kwame Sundaram and Anis Chowdhury**, eds., *Is Good Governance Good for Development?* United Nations Series on Development, London: Bloomsbury Academic, 2012.
17. **Merilee S. Grindle**, “Good Governance: The Inflation of an Idea,” Center for International Development Working Paper No. 202 (Harvard University, October 2010); Brian Levy, *Working with the Grain: Integrating Governance and Growth in Development Strategies* (Oxford University Press, 2014).
18. **Merilee S. Grindle**, “Good Enough Governance: Poverty Reduction and Reform in Developing Countries,” *Governance* 17, no. 4, October 2004.
19. **Merilee S. Grindle**, “Good Enough Governance Revisited,” *Development Policy Review* 25, no. 5, 2007.
20. **Daron Acemoglu, Simon Johnson, and James A. Robinson**, “The Colonial Origins of Comparative Development: An Empirical Investigation,” *American Economic Review* 91, no. 5, December 2001.
21. **Stephen D. Krasner**, “Seeking ‘Good-Enough-Governance’ – Not Democracy,” Reuters blog, September 22, 2013.
22. **Grindle**, “Good Governance: The Inflation of an Idea.” Harvard University, May 2008.

ИМПЕРАТИВЫ МОДЕРНИЗАЦИИ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МАНЕ АТИКЯН

Академия государственного управления Республики Армения

В статье рассмотрены императивы институциональной модернизации публичной политики. Основываясь на тезисе о том, что публичная политика является многомерным ценностным феноменом и предполагает гармонизацию традиционных и современных ценностей, автор рассмотрела механическое внедрение принципов "хорошего управления" в публичную политику. В этом контексте представлено используемое в обороте понятие «нехорошее управление». Автор считает необходимым расширить институциональную основу публичной политики в РА после «бархатной революции» с целью ведения эффективного дискурса государство-партия-общество.

Ключевые слова: публичная политика, «бархатная революция», модернизация, демократический переход, партия, «хорошее управление», «нехорошее управление».

IMPERATIVES OF INSTITUTIONAL MODERNIZATION OF PUBLIC POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

MANE ATIKYAN

Public Administration Academy of the Republic of Armenia

The article discusses the imperatives of institutional modernization of public policy. Based on the thesis that public policy is a multidimensional-value phenomenon and involves the harmonization of traditional and modern values, the author has observed the mechanical implementation of the principles of "good governance" in public policy. The notion of "bad governance" is introduced in this context. The author considers it necessary to expand the institutional foundations of public policy after the "Velvet Revolution" in Armenia in order to conduct an effective State-Party-Society discourse.

Keywords: public policy, "Velvet Revolution", modernization, democratic transition, party, "good governance", "bad governance".

Ներկայացվել է խմբագրություն 29.03.2021

Երաշխավորվել է փախագրության 22.04.2021